Հեղինակային կրթական ծրագիրը Հետազոտական վարժարանում. ներկան և ապագայի հեռանկարները

Գրախոսություն

Սովորող՝ Դավիթ Մուրադյան

Հետազոտական աշխատանքի թեմա՝ «Հեղինակային կրթական ծրագիրը Հետազոտական վարժարանում. ներկան և ապագայի հեռանկարները»

Աշխատանքը ծավալուն է և համապարփակ: Հետազոտական աշխատանքի կառուցվածքային առանձնահատկությունը պահպանված է:

Ներածությունում խոսել է աշխատանքի թեմայի մասին, տվել կառուցվածքը: Հստակ ձևակերպված են խնդիրները, ինչը քիչ աշխատանքներում է հանդիպում: Աշխատանքի նպատակը ևս նշված է: Լավ է, որ խնդիրները և նպատակները տրված են առանձին՝ հստակ ձևակերպմամբ: Անդրադարձել է թեմայի արդիականությանը՝ նշելով, որ ժամանակակից փոփոխվող աշխարհում կրթական համակարգի շարունակական արդիականացումը կարևոր է: Ներածությունից պարզ է դառնում, որ աշխատանքի հեղինակը լավ պատկերացնում է թեմայի նշանակությունը, կարևորում է կրթության ժամանակակից և փոփոխվող լինելը: Կարծում եմ՝ ներածության մեջ չափազանց շատ են մեջբերումները. տարբեր փիլիսոփաների, հայտնի մարդկանց մտքերի ընտրանին կրթության վերաբերյալ թեմայի շուրջ է, բայց «Ներածության» մեջ ուղղակի ծավալ է ապահովում:

Գլուխ առաջին՝ Եզրութաբանություն

Այս գլուխը շարադրված է մի շարք իրավական փաստերի հիման վրա և խիստ վարչական ոճի է, ինչն, իհարկե, աշխատանքի դեպքում առավելություն է: Տրված են «Հեղինակային կրթական ծրագիր» և «Պետական այլընտրանքային» եզրույթների, ծրագրերի սահմանումները, մեկնաբանությունները: Եթե տեքստն ուղղված է բոլորին՝ ծնողին, սովորողին, այլ շահառուների, կարծում եմ՝ ավելի մանրամասն ու պարզ մեկնաբանության կարիք կա:

Գլուխ երկրորդ՝ Կրթության նշանակությունը և դրա հասանելիության մարտահրավերները ժամանակակից աշխարհում և ՀՀ-ում

Այս գլխում հեղինակն անդրադարձել է կրթության հասանելիության մարտահրավերներին՝ բավականին լայն ուսումնասիրություն կատարելով, քանի որ

նշել է ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ աշխարհի պարագայում: Ուսումնասիրությունը հետաքրքիր էր և ընդգրկուն, սակայն, կարծում եմ, այս աշխատանքի պարագայում մի փոքր շեղվում էր բուն թեմայից և կարող է առանձին ուսումնասիրության թեմա դառնալ: ՀՀ-ում կրթության հասանելիության մարտահրավերների ուսումնասիրությունը հիմնված էր հայտարարությունների և փաստաթղթերի վրա, կարծում եմ՝ այս մասով կարելի էր ավելի գործնական մեթոդ կիրառել՝ հարցում, ուսումնասիրություն, դիտարկում, այլ:

Գլուխ երրորդ՝ Հեղինակային կրթական ծրագիր «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում և հետազոտական վարժարանում

Այս գլխում հեղինակը մանրամասն ներկայացրել է հեղինակայի կրթական ծրագրի կարևոր բաղադրիչները՝ պատմելով դրանց կիրառման և ընձեռած հնարավորությունների մասին: Ընդգրկված բոլոր ենթավերնագրերը հեղինակային կրթական ծրագրի մեխն են: Կարծում եմ՝ այս գլուխը ամբողջական է և կարող է անհրաժեշտության դեպքում գործածվել նաև լրացուցիչ նյութ այլոց հեղինակային կրթական ծրագրին ծանոթացնելիս:

Հավելվածում առկա նկարները և մեկնաբանությունները լրացուցիչ բովանդակային նյութ են աշխատանքի համար, քանի որ կարծում եմ ավելի պատկերավոր են դարձնում ասելիքը:

Աշխատանքում կան բազմաթիվ հղումներ, տողատակեր, ինչը կարծում եմ ավելի վստահելի է դարձնում աշխատանքը, սակայն հետազոտական աշխատանքի ձևաչափը պահաջում է նաև առանձին «Գրականության ցանկի» առկայությունը, ինչը չկար այս աշխատանքում:

Հետազոտական աշխատանքի առավելությունները՝

- Աշխատանքը ծավալուն էր, մանրամասն և լայն ուսումնասիրված:
- Նկատելի է, որ հեղինակը տիրապետում է ընտրած թեմային ամբողջովին:
- Աշխատանքի հեղինակը շարադրանքում եղել է ազատ և համարձակ՝ վերլուծելով և ուսումնասիրելով փաստեր, ենթադրություններ անելով:

Տաթև Աբրահամյան
Հայոց լեզվի և գրականության դասավանդող